ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ info@moj.am

ՈՐՈՇՈՒՄ N 107-Ա

Կառավարչին հաշվառումից հանելու մասին

29.11.2022թ. **ք. Երևան**

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գրիգոր Մինասյանս, ուսումնասիրելով սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանին հաշվառումից հանելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

1. ***Էական նշանակություն ունեցող փաստեր.***

1.1. Արդարադատության նախարարությանն ուղղված 28.11.2022 թվականի թիվ Մ/82436-2022 դիմումով սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանը (այսուհետ նաև՝ Դիմումատու) խնդրել է իրեն հանել սնանկության կառավարչի հաշվառումից:

2. ***Կիրառելի իրավական նորմեր.***

«Սնանկության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կառավարիչը հանվում է հաշվառումից իր դիմումի համաձայն, ինչպես նաև որակավորումը կասեցվելու կամ դադարեցվելու դեպքերում:

Արդարադատության նախարարի 12.03.2020 թվականի «Սնանկության գործով կառավարչին հաշվառելու և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» թիվ 108-Ն հրամանի հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ հաշվառումից հանելու վերաբերյալ կառավարչի

դիմումը նախարարություն ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունը որոշում է կայացնում կառավարչին հաշվառումից հանելու մասին, որից հետո կառավարիչների հաշվառման գրանցամատյանում այդ մասին կատարում է գրառում, ինչպես նաև կայքում հրապարակված կառավարիչների ցանկից հեռացնում է կառավարչի վերաբերյալ տվյալները: Կառավարչի դիմումի հիման վրա հաշվառումից հանվելու դեպքում կառավարիչը չի կարող ընտրվել և (կամ) նշանակվել որպես կառավարիչ, սակայն շարունակում է մասնակցել դեռևս չավարտված սնանկության վարույթներին:

3. <u>Իրավական վերլուծություններ և եզրահանգում.</u>

Վերոշարադրյալ իրավանորմերի պահանջներից պարզ է դառնում, որ, ի թիվս այլ հիմքերի, կառավարչին հաշվառումից հանելու հիմք է հանդիսանում վերջինիս կողմից դիմում ներկայացնելը:

Կառավարչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա վերջինս հաշվառումից հանվում է արդարադատության նախարարի որոշմամբ, որից հետո չի կարող ընտրվել և (կամ) նշանակվել որպես կառավարիչ, սակայն շարունակում է մասնակցել դեռևս չավարտված սնանկության վարույթներին:

Տվյալ պարագայում Դիմումատուն արդարադատության նախարարություն ներկայացված դիմումով խնդրել է իրեն հանել սնանկության գործով կառավարչի հաշվառումից:

Նշվածի արդյունքում գտնում եմ, որ առկա է «Սնանկության մասին» օրենքի 24.1-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմք՝ սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանին հաշվառումից հանելու համար:

Հիմք ընդունելով սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանի դիմումը և ղեկավարվելով **«Սնանկության մասին» օրենքի 24.1-րդ հոդվածի 5-րդ մասով.**

ՈՐՈՇԵՑԻ

1. Սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանին (որակավորման վկայականի համարը՝ 02/2015) հաշվառումից հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սնանկության գործով կառավարիչ Արթուր Առուշանյանին այն հանձնելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ